**ՏԵՂԵԿԱՆՔ**

**(«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվող փոփոխությունների և լրացումների վերաբերյալ)**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ**

Ընդունված է 1997 թվականի դեկտեմբերի 27-ին

**Հոդված 12. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքի դրույքաչափերը**

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

| | |
|---|---|
| 1. ազգանվան, անվան և հայրանվան փոխման համար, ներառյալ՝ վկայական տալը | բազային տուրքի հիսնապատիկի~~երեսնապատիկի~~ չափով |
| 2. ***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-68-Ն)*** | |
| 2.1. օտարերկրյա քաղաքացիների, այդ թվում՝ ամուսնացողներից մեկի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու դեպքում ամուսնության գրանցման համար, ներառյալ՝ վկայական տալը | բազային տուրքի հարյուրապատիկի չափով |

| | |
|---|---|
| 3. ամուսնալուծության գրանցման համար, ներառյալ՝ վկայական տալը | բազային տուրքի տասնապատիկի չափով |
| 4. ~~քաղաքացիական կացության ակտերի գրանցման ուղղման և լրացման համար~~ | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 4 1 քաղաքացիական կացության ակտերի գրանցումների փոփոխության համար | բազային տուրքի երեսնապատիկի չափով |
| 5. քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին վկայականների կրկնօրինակը տալու | բազային տուրքի յոթնապատիկի~~հնգապատիկի~~ չափով |
| 6. հայրություն (մայրություն) ճանաչելու համար | բազային տուրքի տասնապատիկի չափով |
| 6 1 Օտարերկրյա քաղաքացիների համար հայրություն (մայրություն) ճանաչելու համար | բազային տուրքի երեսնապատիկի չափով |
| 7. ***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-68-Ն)*** | |
| 8. քաղաքացիական կացության ակտերի գրանցումները վերականգնելու համար, ներառյալ՝ վկայականներ տալը | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| 9. (կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-68-Ն) | |
| 10. ***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-68-Ն)*** | |
| 11. ***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-68-Ն*** | |

| | |
|---|---|
| 12. Հայաստանի Հանրապետությունում ամուսնության բացակայության մասին տեղեկանք տալու համար | բազային տուրքի տասնապատիկի չափով |
| 13. (կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-68-Ն) | |
| 14. օտարերկրյա քաղաքացիների կողմից երեխայի որդեգրման մասին ակտային գրանցման համար | բազային տուրքի երեքհարյուրապատիկի չափով |
| 15. քաղաքացիական կացության ակտային գրանցման առկայության վերաբերյալ տեղեկանքի համար | բազային տուրքի հնգապատիկի չափով |